# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 68

### ԶԱՌԻԹԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 13.08.2020 թվականի թիվ ՍՊ//23097-2020 հանձնարարականի պահանջները, ***որոշում եմ՝***

ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր՝ 1.2-1) համայնքային ծառայության պաշտոնի անձնագրում կատարել լրացում՝

1. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝

1)հանրային ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

2)իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.

3)համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի, էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ.

4)մշակում է հանրային ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը, դրանք ներկայացնում տվյալ մարմնում հաստատման.

5)վարում է հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 69

### ՄՅԱՍՆԻԿ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԾԱՌԵՐՆ ՈՒ ՃՅՈՒՂԵՐԸ ԿՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, և հիմք ընդունելով Զառիթափ համայնքի Սերս բնակավայրի բնակիչ Մյասնիկ Ավագյանի դիմումը, ***որոշում եմ՝***

1. Թույլատրել Մյասնիկ Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից /ծածկագիր՝ 10-040-13-5 0,020 հա գյուղատնտեսական նշանակության այգի և ծածկագիր՝ 10-040-19-6 0,109 հա տնամերձ/ կտրել չորացած և այրված ճյուղերն ու ծառերը, որոնք խանգարում են այգու մշակմանը:

2. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 70

### ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԾԱՌԵՐՆ ՈՒ ՃՅՈՒՂԵՐԸ ԿՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, և հիմք ընդունելով Զառիթափ համայնքի Սերս բնակավայրի բնակիչ Խաչատուր Ավագյանի դիմումը, ***որոշում եմ՝***

1. Թույլատրել Խաչատուր Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից /ծածկագիր՝ 10-040-105-42 0,51 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող և ծածկագիր՝ 10-040-004-0006 0,29 հա տնամերձ / կտրել չորացած և այրված ճյուղերն ու ծառերը, որոնք խանգարում են այգու մշակմանը:

2. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 71

ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ՕԳՈՍՏՈՍԻ 2019 Թ.-Ի ԹԻՎ 97 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ***որոշում եմ՝***

Զառիթափ համայնքի ղեկավարի 28 օգոստոսի 2019 թ.-ի թիվ 97 որոշման գործողության ժամկետը ավելացնել 2 /երկու/ տարով, մինչև 28 օգոստոսի 2022 թվականը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 72

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետի և 4-րդ պարբերության 1-ին կետի պահանջներով, և հիմք ընդունելով Զառիթափ համայնքի ավագանու 31.01.2019թ.-ի 13-Ն որոշումը, ***որոշում եմ՝***

Համայնքի բյուջեից ներքոհիշյալ բնակիչներին հատկացնել 270000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ դրամ ընդհանուր գումարով դրամական օգնություն /սոց. նպաստ /՝ յուրաքանչյուրին հետևյալ չափերով.

| | | |
|---|---|---|
| 1.Սարմեն Զոհրաբյան | 70000 | դրամ |
| 2. Գարիկ Մուրադյան | 30000 | դրամ |
| 3. Արման Բենիամինյան | 25000 | դրամ |
| 4. Արեգնազան Ավագյան | 25000 | դրամ |
| 5. Տանյա Խաչատրյան | 25000 | դրամ |
| 6. Արսեն Վարդանյան | 20000 | դրամ |
| 7. Հմայակ Մնացականյան | 20000 | դրամ |
| 8. Գայանե Թադևոսյան | 20000 | դրամ |
| 9. Անյուտա Աբրահամյան | 20000 | դրամ |
| 10. Վալերիկ Բաբայան | 15000 | դրամ |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 73

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ՝ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 10-019-0318-0090 2,4 ՀԱ ԿՈՐԻԶԱՎՈՐ ԱՅԳՈՒ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետով, և հիմք ընդունելով Զառիթափ համայնքի ավագանու 12.08.2020 թ.-ի թիվ 43 որոշումը, ***որոշում եմ՝***

Զառիթափ համայնքի Գոմք բնակավայրի ծածկագիր՝ 10-019-0318-0090 2,4 հա կորիզավոր այգին փոխադրել ընդերքի, արդյունաբերության և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 74

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05 ՕԳՈՍՏՈՍԻ 2006 Թ.-Ի ԹԻՎ 9 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ***որոշում եմ՝***

1. Զառիթափ համայնքի Սարավան բնակավայրի ղեկավարի «Սարավան բնակավայրում հասցեավորում անցկացնելու մասին» 05 օգոստոսի 2006 թ.-ի թիվ 9 որոշման բովանդակության մեջ «Գյունե տարածք» բառերը փոխարինել «Այգիներ տարածք» բառերով, այնուհետև՝ ինչպես տեքստում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 75

## ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՔԱՄՈՒՑ ԿՈՏՐՎԱԾ ՈՒՌԵՆՈՒ ԾԱՌԸ ԿՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, և հիմք ընդունելով Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի բնակիչ Մանվել Ղազարյանի դիմումը, ***որոշում եմ՝***

1. Թույլատրել Մանվել Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասից /10-022-215-003 0,005 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատեսք/ կտրել քամուց կոտրված ուռենու ծառը:

2. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**